Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-788-15.05.2015-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-100-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում.

1. 1-ին մասի «ճարտարապետության» բառից հետո լրացնել «շինարարության,» բառով:
2. 2-րդ մասի «Հայաստանի Հանրապետության վաստակավոր ճարտարապետի պատվավոր կոչումը» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության վաստակավոր շինարարի պատվավոր կոչումը,» բառերով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի «ճարտարապետության» բառից հետո լրացնել «շինարարության,» բառով:

Հոդված 3. Օրենքի 31-րդ հոդվածից հետո լրացնել նոր 31.1 հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 31.1 Հայաստանի Հանրապետության վաստակավոր շինարարի պատվավոր կոչումը

Հայաստանի Հանրապետության վաստակավոր շինարարի պատվավոր կոչումը շնորհվում է շինարարության բնագավառում մեծ վաստակ ունեցող շինարարներին, ինչպես նաև շինարարական, մոնտաժային, նախագծային, գիտահետազոտական և այլ կազմակերպությունների բարձր որակավորում ունեցող մասնագետներին՝ շինարարության զարգացման գործում ունեցած զգալի ներդրման, շենքերի և շինությունների կառուցման, շինարարական կադրերի պատրաստման ու դաստիարակության գործում ունեցած մեծ վաստակի համար:»

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/Հ	Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1.	*2.*	*3.*	*4.*
1.	**ՀՀ կառավարություն**	Օրենքի նախագծի 1-ին հոդվածը ներկայացնել հետևյալ խմբագրությամբ. Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-100-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում. 1. 1-ին մասի «ճարտարապետության» բառից հետո լրացնել «շինարարության,» բառով: 2. 2-րդ մասի «Հայաստանի Հանրապետության վաստակավոր ճարտարապետի պատվավոր կոչումը» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության վաստակավոր շինարարի պատվավոր կոչումը,» բառերով:	Ընդունվել է: Հոդվածը ներկայացվել է նոր խմբագրությամբ:
1.	**ՀՀ Աժ պատգամավոր** Խոսրով Հարությունյան	Օրենքի նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 31.1 հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետության վաստակավոր շինարարի պատվավոր կոչումը շնորհվում է շինարարության բնագավառում մեծ վաստակ և բարձր որակավորում ունեցող շինարարական, մոնտաժային, նախագծային, գիտահետազոտական և այլ կազմակերպությունների մասնագետներին, ինչպես նաև շինարարական կադրերի պատրաստման ու դաստիարակության և ստեղծարար գործունեության մեծ վաստակի համար:»	Ընդունվել է: Օրենքի նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ
2.	**ՀՀ Աժ պատգամավոր** Հեղինե Բիշարյան	Օրենքի նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 31.1 հոդվածը «մասնագետներին» բառից հետո լրացնել «շենքերի և շինությունների կառուցման» բառերով:	Ընդունվել է: Օրենքի նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ